

ԿԱՐԵՆ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Պատմական գիտությունների թեկնածու

ՍԱՄՎԵԼ ԱՆԵՑՈՒ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԽԻԹԱՐ ԱՆԵՑՈՒ ԸՆԴՈՐԻՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

12-րդ դարում Անին երկու պատմիչ է տվել, երկուսն էլ Մայր Տաճարի (Կաթողիկեի) քահանաներ: Սամվել Անեցին իր համառոտ Ժամանակագրությունը գրել է Հայոց Կաթողիկոս Գրիգոր Գ Պահլավունու (1113-1166) պատվերով՝ տեղեկությունների հիշատակումն ավարտելով 1163 թվականով: Պատվիրատուի կամ հեղինակի մահվան պատճառով գործն անավարտ է մնացել (գուրկ է վերջաբանից), սակայն Ժամանակագրության վերջում կատարվել է ևս 4-5 տեղեկության հավելում, մինչև 1173 թվականը, որից հետո այն ընդօրինակվել է տարբեր գրչատներում¹:

Մխիթար Անեցին, որ Սամվելի կրտսեր Ժամանակակիցն էր, իր Պատմությունը գրել է «լայն եւ տարած բանիւք յընդարձակեալ մինչ ի ՌԽԲ (1193) թուականս»²: Երկու անեցի պատմիչների երկերը հետագայում տարբեր ճակատագիր են ունեցել: Եթե Սամվելի Ժամանակագրությունը մեզ է հասել շուրջ հինգ տասնյակ ընդօրինակություններով (որից 32 օրինակ պահվում է Մաշտոցի անվան Մատենադարանում), ապա Մխիթարի մատյանից պահպանվել է միայն սկզբնամասի հատված և ընդամենը մեկ օրինակով: Մխիթար Անեցու երկից 13-րդ դարում օգտվել են Վարդան Արևելցին, Մխիթար Այրիվանեցին և Ստեփանոս Օրբելյանը:

Սամվել Անեցու Ժամանակագրության ընդօրինակություններից հնագույնը ստեղծվել է Կամրջաձորի վանքում, Ավետիս գրչի ձեռքով, 1176 թ. (Մատենադարան, ձեռ. թիվ 5619, էջ 6ա-108ա): 12-րդ դարից ունենք Ժամանակագրության ևս երկու օրինակ, որոնցից մեկը գրվել է Անիում կամ Հռոմոսում (Երուսաղեմ, Սրբոց Հակոբյանց վանք, ձեռ. թիվ 1801, էջ 387-557), մյուսը՝ Հռոմոսում (Մատենադարան, ձեռ. թիվ 3613, էջ 1ա-70բ)³: Ստորև ավելի հանգամանորեն կձանոթանաք այս վերջին մատյանին⁴, որի գրիչը հիշատակարանում իրեն անվանում է Մխիթար Անեցի:

Հռոմոսի ձեռագիրը և Մխիթար Անեցին

¹ Կ. Մաթևոսյան, Սամվել Անեցու Ժամանակագրության հնագույն ձեռագրերը, ակադեմիկոս Ն. Մառի ծննդյան 140 և մահվան 70-ամյակներին նվիրված ժողովածու, Երևան, 2005, էջ 37-48:

² Մխիթար Անեցի, Մատենա աշխարհավէպ հանդիսարանաց, աշխատասիրությամբ Հ. Մարգարյանի, Երևան, 1983, էջ 59 (այսուհետև՝ Մխիթար Անեցի):

³ Այս ձեռագրերին համառոտ անդրադարձել ենք Սամվել Անեցու Ժամանակագրության երեք հնագույն ընդօրինակություններին նվիրված հոդվածում, ուր հիմնական նպատակը Ժամանակագրության ավարտական հատվածի ճշգրտումն էր: Կ. Մաթևոսյան, նշվ. աշխտ., էջ 37-48:

⁴ Մատենադարանի 3613 ձեռագիրը գրված է թղթի վրա, բոլորգրով, սև թանաքով (միապյուն, տող՝ 24 և 26), ունի 79 թերթ (16,5x11,5 սմ), աղյուսակները կարմրագիծ են: Կազմի վրա սև թանաքով գրված է «Սամուէլ քհ. Անեցու ժամանակագրութիւն», իսկ դրա տակ՝ «Ք. Պատկանեան»: Նույն անունը ռուսերենով գրված է կազմի ներսում, կտորի վրա: Շատ հնարավոր է, որ ձեռագիրը պատկանել է հայտնի աղբյուրագետ, պատմաբան Քերովբե Պատկանյանին (1833-1889):

Անիի արվարձաններից ոչ հեռու գտնվող Հոռոմոսի վանքը բացառիկ դեր է ունեցել քաղաքի կյանքում: Բավական է նշել, որ այն Բագրատունի թագավորների դամբանավայրն էր և վայելում էր արքունիքի հովանավորությունը: Վանքը նաև առաջնակարգ հոգևոր կենտրոն էր, հայտնի իր դպրոցով ու գրչատնով: Անիի շրջանից բոլորից շատ ձեռագրեր մեզ հասել են հենց Հոռոմոսից, ընդ որում 12-րդ դարի վերջին քառորդը և 13-րդ դարի առաջին տասնամյակներն առավել արդյունավետ շրջան են եղել:

Սամվել Անեցու՝ Հոռոմոսում ընդօրինակված մատյանը Ժամանակագրության եզակի օրինակներից է, որը պարունակում է միայն այդ երկը, քանի որ ձեռագրերի մեծագույն մասը, որտեղ պահպանվել է Ժամանակագրությունը, տարբեր նյութեր ընդգրկող ժողովածուներ են: Ձեռագրում Անեցու բնագիրը հիմնականում գերծ է միջամտությունից, եղած հավելումները գրությամբ հստակ առանձնանում են (դրանց կանդիդատանք ստորև)⁵:

Կամրջաձորի և Հոռոմոսի ձեռագրերը հնարավորություն են տալիս պատկերացում կազմելու Սամվել Անեցու ինքնագիր մատյանի ինչպես ընդհանուր կառուցվածքի, այնպես էլ որոշ մանրամասների մասին: Օրինակ, աղյուսակներից դուրս, ընդարձակ տեքստով պատմելով Բագրատունի վերջին թագավոր Գագիկ Բ-ի գահազրկման և Բագրատունյաց թագավորության անկման մասին, Անեցին նշում է. «զի դադարեաց իշխանութիւնն թագաւորական՝ պարտ է եւ ի կանոնացս դադարեցուցանել»: Դրան հաջորդող Հայոց թագավորների թվականների սյունակում Անեցին մի սրտառուչ խոսք է գրել՝ «Աւաղ զի ոչ գոյր թագաւոր Հայոց, կարծեմ խափանել կամի այս գաւազանս (և այլն)»⁶:

Քանի որ ժամանակագրական սյունակի լայնությունը բավարարում է ընդամենը երկու-երեք երկաթագիր տառ գրելուն, ապա նշված ոչ մեծ հատվածը ձգվում է մի քանի էջ: Հնագույն բոլոր ձեռագրերում այս հատվածը գրության ճիշտ նույն ձևն ունի, ներառված է ժամանակագրական նեղ սյունակի մեջ⁷: Սա նշանակում է, որ այն հենց այդպես է եղել Սամվել Անեցու ինքնագիր մատյանում:

Ճիշտ այսպես է նաև Նախիջևանում հայ իշխանների այրման մասին տեղեկությունը. «Առ այսու ժամանակօք այրեցին զիշխանսն Հայոց ի Նախճաւանի եւ այնր աղագաւ պակասեցան կարգ այսր գաւազանի...»⁸, գրում է Անեցին: Հայոց իշխանների թվարկումը դադարեցնելով, նա այս հատվածը մանրատառ տեղավորել է աղյուսակի նեղ սյունակում: Իսկ հատվածը ավարտել է հետևյալ բառերով՝ «...ուստի եւ ես

⁵ Սամվել Անեցու Ժամանակագրության գրեթե բոլոր ընդօրինակությունները պարունակում են հետագայի հավելումներ: Արշակ Տեր-Միքելյանը 1893 թ. Վաղարշապատում ձեռքի տակ ունենալով 14 ձեռագիր (մեծագույն մասը՝ 17-րդ դ.), Անեցու երկը հրատարակել է դրանցում եղած հավելումներով: Սակայն այժմ հայտնի են Ժամանակագրության բազմաթիվ այլ ընդօրինակություններ, որոնց մի մասը պարունակում են չհրապարակված ժամանակագրական միավորներ: Դրանցից մեկն էլ Հոռոմոսի մատյանն է: Մատենադարանում այժմ պահվում է Անեցու Ժամանակագրության 33 ընդօրինակություն:

⁶ Սամուելի քահանայի Անեցույ Հաւաքմունք ի գրոց պատմագրաց՝ յաղագս գիւտի ժամանակաց անցելոց մինչեւ ի ներկայս ծայրաքաղ արարեալ, յառաջաբանով, համեմատութեամբ, յաւելուածներով եւ ծանօթութիւններով Արշակ Տեր-Միքելեանի, Վաղարշապատ, 1893, էջ 110 (այսուհետև՝ Անեցի):

⁷ Մատենադարան, ձեռ. թիվ 5619, էջ 96բ-97ա, թիվ 3613, էջ 62ա-62բ:

⁸ Անեցի, էջ 85-86:

սկսայց շարագրել **ի տողիս յայս**» (էջ 48բ-49բ)⁹: Ավելի ուշ շրջանի ձեռագրերում այս հատվածը գրել են աղյուսակից դուրս, և հրատարակության մեջ վերջաբանը իմաստափոխվել, դարձել է՝ «...ուստի եւ ես սկսայց շարագրել **ի տեղոջն իւրում**»¹⁰:


Սամվել Անեցու բնօրինակը առաջին մասում (մինչև աղյուսակները) ունեցել է նաև ընդգծված հատվածներ: Կամրջաձորի օրինակում դրանք գրված են մանուշակագույն թանաքով, իսկ Հոռոմոսի ձեռագրում այդ նույն հատվածներն ունեն բառերի վերնամասում դրված կետագծային նշումներ (ընդգծման ձև): Այդ կետագծերը Մխիթարը դրել է նաև իր հիշատակարաններում (նկ. 1):

Հոռոմոսի ձեռագիրը գրչության հատկությամբ և անխաթարությամբ կարող է հիմք դառնալ Անեցու Ժամանակագրության հեղինակային բնագրի վերականգնման համար: Այս ձեռագիրն ուշագրավ է նաև նրանով, որ գրիչը նույնպես անեցի է, ընդ որում, մեծ հավանականությամբ, Սամվել Անեցու կրտսեր ժամանակակից, պատմիչ Մխիթար Անեցին: Ինչ հիմքեր կան նման ենթադրության համար:

Նախ ծանոթանանք գրչի հիշատակարաններին: Առաջինը գտնվում է Ժամանակագրության առաջին հատվածի վերջում, աղյուսակներից անմիջապես առաջ. «Զյետնեալս արդիւնական գործոց **գլուստ գրիչս զՄխիթարիչ Անեցի սուտանուն արեղայ եւ աշակերտ բանի ի վանացն Հոռոմոսի**, սնեալ առ ոտն Սուրբ Յովանիսի յիշեսցիք ի Քրիստոս աղաչեմ» (էջ 26բ), երկրորդը՝ Հայաստանում քրիստոնեության հաստատմանը վերաբերող հատվածից հետո. «Զմեղաւոր **ստացաւս եւ գաշխատաւորս զՄխիթար** եւ ծնաւոսն մեր եւ եղբարսն յիշել աղաչեմ» (էջ 35բ):

Ինչպես տեսնում ենք, 12-րդ դարի վերջերին (1173 թվականից հետո) Հոռոմոսում աշխատած գրիչն իրեն կոչում է Մխիթարիչ (կամ Մխիթար) Անեցի: Ճիշտ նույն ժամանակաշրջանում է ապրել նաև պատմիչ Մխիթար Անեցին, որը հիշվում է որպես քաղաքի Կաթողիկե եկեղեցու փակակալը, իր երկը գրել է Հառիճի վանքի առաջնորդ Գրիգոր վարդապետի պատվերով և ավարտել 1193 թվականին¹¹:

Այն, որ աղբյուրներում Մխիթարը հիշվում է որպես քահանա (երեց), իսկ այս հիշատակարանը գրողը արեղա է, նրանց նույնացումը բացառող հանգամանք չի կարող լինել, որովհետև հիշյալ շրջանում Անիի մերձակա վանքերում, որպես միաբանության անդամ, «կուսակրոն արեղայից» բացի հիշատակվում է «աշխարհական ա-




⁹ Այսուհետև Հոռոմոսի ձեռագրի էջերը նշում ենք փակագծում, առանց ձեռագրահամարի: Այս և հաջորդ մեջբերումներում ընդգծումները մերն են - Կ. Մ.:

¹⁰ **Անեցի**, էջ 86:

¹¹ **Մխիթար Անեցի**, էջ 5-6, 12, 59: Մխիթարի պատվիրատուն՝ Հառիճի վանահայր Գրիգոր վարդապետը, մահացել է 1188 թ.:

բեղան»¹²:

Հռոմոսում աշխատած Մխիթարը ոչ միայն Սամվել Անեցու մատյանի գրիչն է, այլև **ստացողը** («ստացալու եւ զաշխատաւորս զՄխիթար»), մի հանգամանք, որը վկայում է, թե նա պատմագիտական նախասիրություններ ունեցող անձ էր: Հետաքրքրական է նաև նրա՝ «**Անեցի**» մականունով հանդես գալը, որովհետև սովորաբար ծննդավայր տեղանունը մականուն էին դարձնում հոգևոր բնագավառում կամ գրական, մատենագրական ասպարեզում որոշակի գործունեություն ծավալողները:



Նկ. 2

կամ առնվազն նման հակումներ ունեցողները: Բազմաթիվ բնիկ անեցիներ վիմագիր արձանագրություններում կամ հիշատակարաններում իրենց անվանը «Անեցի» մականունով չեն կցում: Օրինակ, 1211 թ. «Հաղբատի ավետարանը» ստացող, Հաղբատում ուսանած անեցի Սահակ քահանան իր մասին գրում է. «ազգաւ եւ տոհմիւ ի մեծ մայրաքաղաքէն յԱնույ», սակայն ո՛չ իրեն, ո՛չ եղբայրներին կամ հորը «Անեցի» մականունով չի կոչում¹³: Իսկ ահա Մխիթարը վերցրել է այդ մականունը, որով հետո նրան ճանաչել են նաև ուրիշները՝ «պատուական երեցն Մխիթար Անեցին» (Վարդան Արևելցի), «գեղեցիկ պատմութիւնն Մխիթարայ Անեցոյ» (Ստեփանոս Օրբելյան)¹⁴:

Փանոս Օրբելյան¹⁴:

Ուշադրության է արժանի այն միջամտությունը, որ Մխիթար Անեցին կատարել է Սամվել Անեցու Ժամանակագրության վերնագրում: Բազմաթիվ օրինակների համադրությամբ վերականգնված վերնագիրն այսպիսին է. «Սամուելի քահանայի հաւաքմունք ի գրոց պատմագրաց յաղագս գիտի Ժամանակաց անցելոց մինչև ի ներկայս ծայրաքաղ արարեալ»: Մխիթար Անեցին փոքրիկ փոփոխություն է կատարել,

¹² Բազմայրի և Արջոռոճի վանքերի 13-րդ դ. սկզբի արձանագրություններում, որոնք կանոնակարգում են մահացած միաբանների համար մատուցվող պատարագների թիվը, հետևյալ պատկերն ենք տեսնում. Բազմայրում՝ վանահորը՝ 4 քառասունք, երեցին և աբեղային՝ 3 քառասունք, «աշխարհական աբեղին»՝ 2 քառասունք: Արջոռոճում՝ վանահորն ու վարդապետին՝ 4 քառասունք, երեցին և «բնաբեղան»՝ 3 քառասունք, «աշխարհական հաբեղին եւ մանգան»՝ 2 քառասունք (Ն. Մարգիսյան, Տեղագրությունք ի Փոքր եւ ի Մեծ Հայս, Վենետիկ, 1864, էջ 183, 191, Գ. Մարգարյան, Միջնադարյան կրոնաիրավական նորմերի վիմագրական արտացոլումները, Պատմա-բանասիրական հանդես, 2006, թիվ 2, էջ 128-129): Այստեղ երևում է, որ «աշխարհական աբեղա» անվանվածը մի կարգ ցածր էր համարվում երեցից և աբեղայից և հավասար էր «մանգան»: Հռոմոսում պահպանված 1195 թ. նույնաբնույթ արձանագրության մեջ վանահոր համար դարձալ 4 քառասունք է նախատեսված, իսկ վերջում ավելացված է՝ «աշխարհական հաբեղայի»՝ 2 քառասունք (Ա. Պալատյան, Ժ. Մ. Թիերի, Ժ. Պ. Մահե, Հռոմոսի վանքը, Թորոս Թորամանեան (անտիպ նիւթեր), «Monuments Piot» ժողովածու, թիվ 81, Փարիզ, 2002, էջ 185): Հռոմոսից գրիչը, որպես «աշակերտ բանի», ավելի համապատասխանում է հենց այս կարգավիճակին:

¹³ Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար (կազմեց՝ Ա. Մաթևոսյան), Երևան, 1984, էջ 68-71:

¹⁴ Վարդան Արևելցի, Տիեզերական պատմություն, Երևան, 2001 (բնագիր), էջ 99, Ստեփանոս Օրբելյան, Պատմություն նահանգին Միսական, Տիգրիս, 1910, էջ 373:

որով ընդգծել է Սամվելի անեցի լինելը. «Սամուելի քահանայի հաւաքմունք ի գրոց պատմագրաց յաղագս գիւտի ժամանակաց անցելոց մինչեւ ի ներկայս, ծայրաքաղ, **քաղաքաւ անեցի**» (էջ 1ա), (նկ. 2):

Հետաքրքիր է, որ Մխիթար Անեցու պատմության առաջին հատվածը պարունակող միակ ձեռագրում (15-րդ դ. ընդօրինակություն) նրա երկի անվանման մեջ նա շեշտված է Անին¹⁵:

Հոռոմոսի մատյանում գրչի մեկ այլ միջամտություն գտնում ենք այս վանքի հիմնադրմանը վերաբերող հատվածում, ուր Սամվել Անեցու բնագրում նշված է «հոչականունն Հոռովմոսին կոչեցեալ վանք»¹⁶, իսկ Մխիթար Անեցու մոտ մի փոքր այլ է. «**հոչակատր տունն** Հոռովմոսին կոչեցեալ վանք» (էջ 49 բ): Ինչպես Ժամանակագրության վերնագրում, այնպես էլ այստեղ Մխիթար Անեցին թեև փոքրիկ միջամտությամբ, այնուամենայնիվ, սեփական վերաբերմունքն է արտահայտել: Ընդօրինակության գործը սերտած սովորական գրիչը դժվար թե իրեն նման բան թույլ տար:

Մխիթար Անեցու պատմության հրատարակիչ Հ. Մարգարյանը նշում է, որ իր աշխատությունը գրելիս Մխիթարը Սամվելի երկն օգտագործել է առավել չափով, «իբրև ամենահավաստի ժամանակագրական ուղեցույց», և անհավանական չի համարում, որ օգտվել է Սամվել Անեցու «ինքնագիր» օրինակից¹⁷: Իր օգտագործած աղբյուրները թվարկելիս («Թե ո՞րք պատմագիրք ծանալթ մեզ») Մխիթարը վերջինը նշում է իր ավագ ժամանակակցին՝ Սամվել Անեցուն¹⁸: Նրա պատմության պահպանված հատվածում կարելի է գտնել Սամվել Անեցու Ժամանակագրությունից քաղված մեծ ու փոքր հատվածներ¹⁹: Մխիթար Անեցին Սամվելի աշխատության ողջ առանցքը կազմող աղյուսակներից դուրս է բերել Հայոց թագավորների, մարզպանների, իշխանների անվանացանկերը իշխանության տևողության թվերով, նույն սկզբունքով կազմել նաև իր երկի «Կարգ կաթողիկոսաց» բաժինը²⁰: Ակներև է, որ Մխիթարն իր գործը

¹⁵ “Հանդէսք բանից աշխարհագումար գրուցաց, տիեզերապատում անցից՝ վիպասանեալ ի քաջ գիտնականէ **Մխիթարայ, աւագերիցու մեծ Կաթողիկէին Անույ հոյակապ քաղաքի, ի խնդրոյ** հաւր Հառիճայի Գրիգորոյ վարդապետի” (**Մխիթար Անեցի**, էջ 56): Մխիթարի պատմության հրատարակիչ Հ. Մարգարյանն իրավացիորեն գրում է, որ այս վերնագիրը “հեղինակային լինել չի կարող” (նույն տեղում): Սակայն դատելով Ստեփանոս Օրբելյանի մի վկայությունից, սույն վերնագիրը բավական հին ծագում ունի: Օրբելյանը, որը ձեռքին ունենցել է Մխիթար Անեցու պատմությունը, Բաղաց թագավորության կործանման մասին գրում է. “...գոր լուաք եւ ընթերցաք ի թղթոյն Տեառն Ստեփաննոսի՝ Միւնեաց եպիսկոպոսի, գոր գրեալ էր **ի հոյակապ քաղաքն Անի ի խնդրոյ սուրբ քահանային Մխիթարայ՝ աւագերիցու քաղաքին եւ փակակալի սուրբ կաթողիկէին**” (**Ստեփաննոս Օրբելեան**, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 332): Վերը նշված խորագրի հետ զուգահեռները հուշում են, որ Օրբելյանի խոսքի վրա զգալի հետք է թողել Մխիթարի երկի վերնագիրը:

Հավանաբար Մխիթարի Պատմության վերնագրում Անիի հիշատակումն է նաև պատճառներից մեկը, որ նրա անվան հետ է կապվել “Պատմութիւն քաղաքին յԱնույ” քաղագրական (“ծայրաքաղ”) երկը: **Հ. Անայան**, Հայկական մատենագիտություն, հ. Ա, Երևան, 1959, էջ LV, **Մխիթար Անեցի**, էջ 9-10, 107-123:

¹⁶ **Անեցի**, էջ 99, Մատենադարան, ձեռ. 5619, էջ 91ա:

¹⁷ **Մխիթար Անեցի**, էջ 31-33:


¹⁸ **Մխիթար Անեցի**, էջ 73:

¹⁹ Պատմության սկզբում (“Ճառ երկրորդ”), Մխիթար Անեցին Ադամի ու նրա հաջորդների մասին հատվածը բառացիորեն արտագրել է Սամվել Անեցուց: Նույնն են նաև Հայոց թագավորների, իշխանների և կաթողիկոսների ցանկերը (ցավոք Անեցու հրատարակության մեջ աղյուսակ-ցանկերը դուրս են թողնված, սակայն դրանք առկա են ձեռագրերում):

²⁰ **Մխիթար Անեցի**, էջ 65-69:

ստեղծելիս Սամվել Անեցու Ժամանակագրությունն ունեցել է որպես սեղանի գիրք²¹:

Իհարկե, Սամվել Անեցու Ժամանակագրությունից Մխիթար Անեցին կարող էր օգտվել նաև Հռոմոսի ձեռագրի գրիչը չլինելով, սակայն անվան, մականվան և ժամանակի համապատասխանությունը, Հռոմոսում աշխատած գրչի պատմական նախասիրությունները (ստացող լինելու հանգամանքը), Սամվելի «անեցի» լինելն ընդգծելու համար երկի վերնագրին միջամտելը, մեզ բերում են այն համոզման, որ Հռոմոսում ուսանած և քննվող ձեռագիրն ընթորինակած գրիչը հենց պատմիչ Մխիթար Անեցին է:



Նկ. 3

Այս առումով հիշենք նաև Ղևոնդ Ալիշանի դիտարկումը: Հնարավոր է, որ մեր ձեռագրի հիշատակարանը նկատի ունենալով (կամ արդյոք այլ աղբյուր օգտագործելով), Հռոմոսի վանքի մասին գրելիս նա նշում է. «Ի կես կամ ի վերջ ԺԲ դարու աստանօր ասի վարժեալ եւ Մխիթար Անեցի բազմահմուտն, որոյ սակաւ ինչ ի գրուածոցն եհաս առ մեզ»²²:

Հռոմոսի ձեռագրի վերջին էջը թույլ է տալիս ենթադրություն անել մատյանի գրության թվականի մասին: Ժամանակագրության վերջում արձանագրված է Գրիգոր Տղայի աթոռակալությունը. «ՈԻԲ (1173): Փոխի մահուամբ ի Քրիստոս տեր Ներսէս, եւ փոխանորդէ զաթոռն տեր Գրիգոր Տղա» (էջ 70բ): Դրանից հետո մեկ այլ գրիչ (նրա մյուս հավելումներին կծանոթանանք ստորև) ավելացրել է՝ «ամս Ի(20)»²³:

Ուշադրության է արժանի, որ Մխիթարի գծած ժամանակագրական աղյուսակը վերջանում է էջի կեսին (նկ. 3): Այսինքն, գրիչը նախապես որոշել է, թե մինչև որ թվականն է նշելու, և ըստ այդմ գծել է աղյուսակը: Ինչպես տեսանք, Ժամանակագրության վերջին տեղեկությունը զետեղված է 1173 թվականի դիմաց, իսկ ահա աղյուսակում նշված վերջին թիվը՝ Հայոց ՈԻԶ (1177) թվականն է: Հավանաբար դա է ձեռագրի գրության թվականը, քանի որ ճիշտ նույն սկզբունքն է կիրառված Անեցու Ժամանակագրության Կամրջաձորի օրինակում: Այնտեղ վերջին էջի աղյուսակն ա-

²¹ Հ. Մարգարյանը տարբեր առիթներով ընդգծում է Սամվել Անեցու Ժամանակագրության՝ Մխիթարի երկի վրա ունեցած ազդեցությունը: «Մխիթար Անեցին ջանում է ճշգրիտ որոշել ժամանակը և դիմում է ժամանակագրական հարցերում նրա համար ամենամեծ հեղինակություն հանդիսացող Սամվել Անեցու Պատմությանը: ...Սամվել Անեցու պատմական երկի առավելագույն օգտագործմամբ են գրված նաև Մխիթար Անեցու մյուս ժամանակագրական ցանկերը: Նա ոչ միայն ուղղակիորեն է օգտվում Սամվել Անեցու աշխատությունից, այլև անգամ ժամանակագրություն է հյուսում նրա տարբեր առիթներով հաղորդած տեղեկություններից: Սամվել Անեցու ազդեցությունը հատկապես նկատելի է Մխիթար Անեցու Պատմության մեզ հասած վերջին գլխում»: **Մխիթար Անեցի**, էջ 17, 32:

²² Ղ. Ալիշան, Շիրակ, Վենետիկ, 1881, էջ 27:

²³ Այս գրիչը նաև Մխիթարի գրած վերջին բառի «տ»-ն դարձրել է «պ», «դ» տառը ջնջել է, թողել «ա»-ն և շարունակել «լիառունի»: Ստացվել է «տեր Գրիգոր Պալիառունի»:

վարտվում է Հայոց ՈԻԵ (1176) թվականով²⁴, իսկ հաջորդ թերթի հիշատակարանում Ավետիս գրիչը նշում է, որ մատյանը գրել է «ի ՈԻԵ (1176) թուականութեանն Հայոց...»²⁵:

Գրիչների այս մոտեցումը տրամաբանական է: Եթե ժամանակագրական վերջին նշումը 1173 թվականից է, ապա գրիչը աղյուսակում թեկուզ մեկ տարի ավելի նշելու որևէ պատճառ չէր կարող ունենալ (մանավանդ, եթե ողջ էջով մեկ աղյուսակ չէր գծել): Քանի որ շարունակել է տարիների թվարկումը, ապա դրանում որևէ իմաստ է տեսել, ավելի ճիշտ, փաստագրել է իր ապրած ժամանակը: Իսկ այդ (գործը կատարելու) թվականից առաջ չի անցել (ասենք, չի նշել 1178, 1179, 1180 և հաջորդ թվականները), քանի որ դրանք իր համար դեռևս անհայտ ապառնի ժամանակ էին:

Հոռոմոսի ձեռագրում Մխիթարը ոչ միայն թվականները չի շարունակել, այլև աղյուսակի գիծն է փակել էջի կեսին: Հետևաբար, կարող ենք ենթադրել, որ ինչպես Կամբջաձորում Ավետիս գրիչն է աղյուսակը վերջացրել ձեռագրի գրչության թվականով, նույն կերպ է վարվել նաև Մխիթար Անեցին: Այս ենթադրությամբ Հոռոմոսի ձեռագրի գրչության տարեթիվ կարող ենք համարել 1177 թվականը: Մխիթար Անեցու կենսագրության հայտնի տվյալները նկատի ունենալով՝ կարելի է ասել, որ 1177 թվականը միանգամայն համապատասխանում է այն տարիքին, երբ ապագա պատմիչը կարող էր գտնվել Հոռոմոսում, որպես «աշակերտ Բանի ի վանացն Հոռոմոսի, սնեալ առ ոտն Սուրբ Յովանիսի» (էջ 26բ):

Ժամանակագրության մեջ կատարված հավելումները

Մատենադարանի 3613 ձեռագրում հիմնական հավելումներ կատարած անանուն գրիչը, որին պայմանականորեն կանվանենք **երկրորդ գրիչ**, օգտագործել է Մխիթար Անեցու գրից ավելի բաց գույնի թանաք: Բնագրի առաջին մասում (մինչև աղյուսակները) երկու փոքրիկ ավելացում ունի: Դրանք դնում ենք փակագծի մեջ. «...ի Սառայե լինի Սահակ՝ ուստի ազգն Հրեից, և ի Քետուրայն լինի (Մաղիամ²⁶, ուստի) ազգն Պարթևաց» (էջ 8բ, հմմտ. **Անեցի**, էջ 17): «Պտղոմեոս Փիլադելփոս ամս ԼԸ: Սայ գՀրեից գիրսն ի Յոյն լեզու ետ թարգմանել (Հ (70) թարգմանչօքն)» (էջ 16ա, հմմտ. **Անեցի**, էջ 34-35):

Հիմնական հավելումները աղյուսակների մեջ են, սկսվում են ավետարանական կամ Եկեղեցու պատմության վաղ շրջանին վերաբերող հայտնի տեղեկությունների մուծմամբ²⁷: Այնուհետև հավելումները Հայ Եկեղեցու պատմության վերաբերյալ են: Սամվել Անեցին Գրիգոր Լուսավորչի որդու՝ Արիստակեսի մահվան մասին առանձին չի նշում, իսկ հավելումների հեղինակը ավելացնում է. «Սուրբն Ռստագէս՝ որդի Գրիգորի Լուսավորչի, սպանաւ յիշխանէ ումեմնէ Հայոց վասն յանդիմանելոյ ի նմա-

²⁴ Մատենադարան, ձեռ. 5619, էջ 107ա:

²⁵ Նույնը, էջ 108ա:

²⁶ Ծննդ. ԻԵ 2:

²⁷ Փրկչական ԺԲ (12) թվականի դիմաց ավելացված է. «Յիսուս Քրիստոս երկուսասան ամաց, յԵրուսաղէմ ի տաճարն նստէր ընդ վարդապետսն՝ լսէր ի նոցանէ եւ հարցանէր զնոսա» (էջ 27ա): Հաջորդ թերթում՝ «Յամի տեառն ԼԴ (34) Պետրոս առաքեալ յետ գալստեան Սուրբ Հոգոյն նստաւ եպիսկոպոս յԵրուսաղէմ զամս Դ(4)» (էջ 28բ): Նման կարգի հավելումներ կան նաև 27բ, 28ա, 29ա, 30ա, 34բ, 36ա, 38ա, 40բ, 41, 43ա էջերում: Նշված և մյուս մեջբերումներում համառոտագրությունները բացել ենք - Կ. Մ.:

նե» (էջ 36բ)²⁸։ Նույն կերպ մանրամասն է ներկայացնում Լուսավորչի թոռների՝ Հուսիկ Կաթողիկոսի մահը և Գրիգորիսի նահատակությունն Արցախում (37ա)։ Երկրորդ գրիչը Ներսես Մեծի վերաբերյալ հավելում է. «Սա վախճանի ի ձեռննէ արքային Պապա յաղագս յանդիմանելոյ ի նմանէ, դեղ մահոյ արբուցեալ նմա։ Եւ նա լի Հոգով Սրբով բազում ինչ ի հանդերձելոցն մարգարեացաւ վասն կործանման քահանայապետութեան եւ թագաւորութեան ազգիս Հայոց եւ վասն գալստեան նեոինն եւ եւս՝ զոր թէ կամիս գտցես յիւրումն ճա(ռ)» (էջ 37բ)։ Ավելի ընդարձակ, բայց ոչ այնքան ստույգ տվյալներով հավելում է արված Սահակ Պարթևի մասին (էջ 38բ)։

Կաթողիկոս Ներսես Բ Բագրևանդցու վերաբերյալ Սամվել Անեցու գրածը հետևյալն է. «ՇԻԶ (526) Տէր Ներսէս ամս Թ (9)»²⁹։ Ժամանակագրության հրատարակության համար օգտագործված «Է» օրինակն ունի Դվինի ժողովի մասին հավելում՝ քաղված Ստեփանոս Տարոնեցի Ասողիկից³⁰։ Մեր ձեռագրում ևս հավելում կա. նախ կաթողիկոսի անվան վերևում գրված է «Աշտարակեցի»³¹, ապա՝ «Սա արար ժողովք ի Դվին հրամանաւ արքային Պարսից Կաւ(ատ), վասն բաժանման ի Յունաց եւ զտօն Ծննդեանն եւ զՄկրտութեան ի միում աւուր առնել սահմանեաց։ Եւ յաւել զԽաչեցարն յԵրէքսրբէանն։ Եւ արգել ոչ գնալ յԵրուսաղէմ» (էջ 42ա)³²։

Երկրորդ գրիչը չի բավարարվել հավելումներով, այլ երբեմն իմաստային աղավաղման հանգեցնող միջամտություններ է կատարել։ Կարինի ժողովին վերաբերող մասում նա ջնջել է եղած բառերից մի քանիսը և նորերը գրել։ Բնագիրը հետևյալն է. «Հերակլի ժողով արարեալ ի Կարնոյ քաղաք, կոչէ և զԵզր ի Հայոց, որ տգիտաբար հաւանեալ Քաղկեդոնի, վասն զի ոչ տարաւ զՅոհան Մայրավանեցի, որ Աստուածային Գրոց բանիբուն ճանաչիւր եւ ի դարձին յանդիմանեալ ի նմանէ»³³։

Երկրորդ գրչի միջամտությունից հետո այն իմաստափոխվել է (հավելումները դնում ենք փակագծերում). «Հերակլի ի ժողով արարեալ ի Կարնոյ քաղաքի, կոչէ եւ զԵզր ի Հայոց, (որ եւ) հաւանեալ Քաղկեդոնի (ժողովոյն, բազում եպիսկոպոսօք եւ իշխանօք նգովեցին) զՅովհան Մայրա(զո)նեցի, որ (ուղղափառ) ճանաչիւր եւ ի դարձին յանդիմանեալ ի նմանէ հալածեաց զՅոհան, Մայրագումեցի կոչելով» (էջ 45ա)։

Սամվել Անեցու բնագրի մեկ այլ հատված՝ «Աստանաւ ի բաց կացին Վիրք միաբանութենէ Հայոց յաւանեալք **աղանդոյն** Քաղկեդոնի ի ձեռն Կիրիոնի...»³⁴, Հռոմոսի ձեռագրում երկրորդ գրչի միջամտությամբ դարձել է՝ «...յաւանեալք (**ժողով**)ոյն Քաղկեդոնի...» (էջ 44բ)։

Այս փոփոխությունները վկայում են երկրորդ գրչի դավանական նախընտրությունների մասին, սակայն բավարար չեն նրան միանշանակ կերպով քաղկեդոնական

²⁸ Հրատարակության մեջ այլ հավելում է (**Անեցի**, էջ 65)։

²⁹ **Անեցի**, էջ 73։

³⁰ Նույն տեղում, տե՛ս նաև Ստեփանոսի Տարոնեցու Պատմութիւն, աշխատասիրութեամբ Ստ. Մալխասեանցի, ՍՊԲ, 1885, էջ 82-83։

³¹ Ներսեսը ծնունդով Բագրևանդի կամ Ալաշկերտի Աշտարակ քյուղից էր։ **Մաղաքիա արքեպս. Օրմանյան**, Ազգապատում, հ. Ա, Ս. Էջմիածին, 2001, էջ 621։

³² Սկզբնաղբյուրների քննությամբ Դվինի այս ժողովին հանգամանորեն անդրադարձել է Մ. Օրմանյանը, բայց նրա վկայակոչած տեղեկությունների մեջ խոսք չկա Երուսաղեմ գնալու արգելքի հաստատման մասին (**Մ. Օրմանյան**, նշվ. աշխ., էջ 633-641)։

³³ **Անեցի**, էջ 79-80, հմմտ. Մատենադարան, ձեռ. 5619, էջ 76ա։

³⁴ Մատենադարան, ձեռ. 5619, էջ 75 բ, **Անեցի**, էջ 79։

կամ միարար անվանելու համար:

Գրիգոր Վկայասերի աթոռակալությանը վերաբերող հատվածում Անեցու նշումը՝ «Տէր Գրիգորիս Ի (20)», երկրորդ գրիչը փոխել է. «Ի» տառին ավելացրել է մասնիկ և ստացել «Խ», կից գրել նաև «Բ», կաթողիկոսի տարեթվերը դարձրել ԽԲ(42), ապա հավելել. «Տէր Գրիգորիս որդի Գրիգորի Մագեստրոսի թողուլ զհայրենի պատինն հետեւեցաւ կրօնաւորութեան եւ բռնադատեալ նստուցաւ յաթոռ հայրապետութեան եւ Վկայասէր անուանեցաւ, զնաց ի Կոստանդինուպոլիս եւ բազում ճառս սրբոց թարգմանեաց ի Յունաց ի Հայս» (էջ 62բ): Գրիգորիսի թվերը 20-ից 42-ի հասցնելով, երկրորդ գրիչը 64բ, 65ա, 65բ էջերում մաքրել է աղյուսակի կաթողիկոսական պունակի թվերը և գրել նորերը, որից հետո ՇԾԵ (1106) թվականի դիմաց ավելացրել է՝ «Տէր Բարսեղ ամս Զ (6)»: Իրականում Սամվել Անեցին Բարսեղ Ա Անեցու աթոռակալությունը դնում է Հայոց ՇԼԱ (1082) թվականից, տարիները նշում՝ «ամս Լ(30)»³⁵:

Երկրորդ գրիչը հավելում ունի նաև Հովհան Օձնեցու և Մանագլետի ժողովի մասին (էջ 48բ): Հետաքրքրական է Հայոց ՃՀԳ (724) թվականի դիմաց Հովհան Տեկոբեցու հիշատակումը. «Որոշեցին զՈհան Տիկորեցի» (էջ 49ա): Այս գործչի մասին տեղեկությունները սուղ և հակասական են³⁶: Նրան հիշատակում է նաև Հովհաննես Սարկավագը. «...ի քաղաքի ժողովն, ի Սուրբ Կաթողիկէ... յորում որոշեցին զՅոհան Տիկորեցի, եւ էր թվականն Հայոց ՃՀԳ (724)»³⁷:

Երկրորդ գրչի հավելումներից մեկը, որ չի կապվում նախորդ և հաջորդ վկայությունների հետ (771 թվականի դիմաց), անհասկանալի է. «Կար ի ձեռն ոչխարն Ա(1) դրամ, եզն՝ Ե(5)» (էջ 50ա): Հաջորդ հավելումը ծանոթագրական է. Սահակ և Հովսեփ եղբայրների նահատակության մասին վկայությանը (Հայոց ՄԽԵ (796) թ.), «ի Կարնոյ քաղաքի», ավելացված է՝ «որ է Արգրումն» (էջ 51ա):

Հաջորդ հավելումը վերաբերում է Հռոմոսի Ս. Հովհաննեսի կառուցմանը, Հայոց ՆՁԷ (1038) թվականին. «Շինուած Հռոմոսի վանացն վերի Սուրբ Յովհաննէսի, ի թագաւորէն Յովհաննիսէ կատարեցաւ» (էջ 60բ): Հռոմոսի Ս. Հովհաննեսի կառուցման թվականը միանգամայն ճիշտ է (նույն թվականն է շինարարական արձանագրության մեջ): Ուշագրավ է «վերի Սուրբ Յովհաննէս» տեղագրական ձևակերպումը, որն առաջին անգամ է հանդիպում³⁸:

Միսիթար Անեցուց և երկրորդ գրչից բացի բնագրի այն հատվածում, ուր խոսվում է Մուհամեդի հաջորդների մասին՝ «...Ապուրաքար, Ալթման եւ Ամր ամս ՀԸ(38)»³⁹ մի երրորդ գրիչ հետևյալ հավելումն է արել. «Այլ եւ չորս ազգք են տաճիկք. Շաֆէհլի, Հանիֆի, Համբալի եւ Մալէքի»⁴⁰: Իսկ սրանից ներքև, ստորին լուսանցքում դարձյալ երկրորդ գրչի ձեռագրով ավելացված է. «Պիղծ Մահմէտս այս Խ(40) ամաց էր, յորժամ սկսաւ զսուտ օրէնքն իւր, եւ ԻԳ(23) ամ բռնակալեաց, ԿԳ (63) ամաց վճարեաց զգարշելի կեանս իւր եւ էջ ի դժոխս ներքինս» (էջ 46բ):

Թե երբ է երկրորդ գրիչը կատարել իր հավելումները, հնարավոր է պարզել ժա-

³⁵ Մատենադարան, ձեռ. 5619, էջ 99բ:

³⁶ Մ. Օրմանյան, նշվ. աշխ., էջ 984:

³⁷ Մանր ժամանակագրություններ, 13-18-րդ դդ., հ. 1, կազմեց՝ Վ. Հակոբյան, Երևան, 1951, էջ 23, 147:

³⁸ Կ. Մաթևոսյան, Սամվել Անեցու ժամանակագրության հնագույն ձեռագրերը, էջ 42:

³⁹ Անեցի, էջ 82, հմմտ. Մատենադարան, ձեռ. 5619, էջ 78ա:

⁴⁰ Գրչությունը հստակ տարբերվում է, հատկապես ինքնատիպ է «ք» տառը:

մանակագրության բնագրին հաջորդող թերթի գրություններից: Գրչության համեմատությունը ցույց է տալիս, որ երկրորդ գրիչը ստորև ներկայացվող պայմանականորեն «երկրորդ միավոր» անվանված փոքր ժամանակագրության հեղինակն է: Բարեբախտաբար նա նշել է, որ այդ ժամանակագրությունը կազմել է 1400 թվականին, հետևաբար Սամվել Անեցու ժամանակագրության մեջ մուծումներն էլ նա կատարել է այդ ժամանակ:

Անեցու ժամանակագրությունից դուրս գտնվող նյութերը

Ձեռագրում Անեցու երկից բացի կան ժամանակագրական այլ փոքր միավորներ. սկզբում՝ երեք մագաղաթյա թերթերի վրա, և վերջում՝ Անեցու երկին հաջորդող 71ա-71բ էջերին, որոնք երկու խմբի բաժանված հրատարակել է Վ. Հակոբյանը⁴¹: Սակայն դրանք տարբեր ժամանակ և չորս տարբեր գրիչների թողած տեղեկություններ են: Նյութերն ըստ գրիչների (գրչության տարբերությամբ) և ժամանակագրորեն դասակարգելու դեպքում հետևյալ պատկերն ենք ստանում.

Առաջին միավոր. էջ Ա, սկսվում է. «Յամի Տեառն ՌՄԺԷ (1217) կարգն սուրբ Տովինիկոսի հաստատեցաւ» վկայությամբ, ավարտվում նույն էջում 1365 թվականի հիշատակմամբ⁴²: Շատ մաշված է, և հետագայում մեկը բարակ գրիչով անցել է տողերի մի մասի վրայով:

Երկրորդ միավոր. էջ 71 բ, սկսվում է գրության ժամանակի նշումով. «...եւ այժմ թվական Փրկչին է Ռ եւ Ն (1400)⁴³ եւ է նահանջ... Եւ թվականն Հայոց է Պ եւ ԽԹ (1400)»: Ապա գրիչն ընթերցողին պարզաբանում է Հայոց թվականի գտնելու եղանակը. «Կալ զթվական Փրկչին եւ ՇԾԱ (551) ի բաց, երբ որ մնա՝ թվական է Հայոց» (էջ 71բ):

Դրան հաջորդում են ժամանակագրական տվյալները՝ «Յամի Տեառն ՌՅԽԸ (1348) եղև ընթանուր մահ տարածամն...», շարունակվում մինչև էջի վերջը՝ հիշատակելով նաև «երկրորդ մահն» (1361) և «երրորդ մահն» (1387), իսկ ժամանակագրության վերջին նշումն արդեն ձեռագրի սկզբի Գ էջի վերնամասում է. «Յամի Տեառն ՌՅԼԲ (1392) եղև չորրորդ մահն...»⁴⁴: Նույն գրիչը 71ա էջին գրել է բնության երևույթներին վերաբերող վկայություններ (արևի, լուսնի խավարում, երկրաշարժ)⁴⁵: Այս գրիչն է Անեցու ժամանակագրության մեջ հավելումներ կատարել:

Երրորդ միավոր. էջ Բ, սկսվում է 1449 թ. Ս. Նիկողայոս եկեղեցու (Ղրիմ) զանգակատան կայծակահարության վկայությամբ, շարունակվում Ե էջում՝ «Ղալաթան է-թող զքաղաքն...», և ավարտվում հիշատակային գրությամբ. «Հազար ավախ, որ այս ծովափներոյս քրիստոնեութին կամի ջնջիլ»⁴⁶: Գրությունները խոշորատառ են, մուգ սև թանաքով: Այս ժամանակագրական հատվածն ամենայն հավանականությամբ

⁴¹ Մանր ժամանակագրություններ, 13-18-րդ դդ., հ. 2, կազմեց՝ Վ. Հակոբյան, Երևան, 1956, էջ 513-514:

⁴² Մանր ժամանակագրություններ, հ. 2, էջ 514:

⁴³ Հրատարակության մեջ. «Եւ այժմ թվական Փրկչին է Ռ եւ Ն եւ է (1407), նահանջ» (Մանր ժամանակագրություններ, հ. 2, էջ 513):

⁴⁴ Նույն տեղում, էջ 513-514:

⁴⁵ Նույն տեղում, էջ 513:

⁴⁶ Նույն տեղում, էջ 514:

գրվել է Ղրիմում:

Չորրորդ միավորը. Էջ Ե, նախորդ վկայության ներքևում, մանրատառ, հագիվ ընթերցվող՝ «Թվ. Հայոցն ՋԻԴ (1475) Կաֆան առե(վալ) ... Թվին ՋԼԱ (1482) ...»⁴⁷: Շարունակությունը ջնջված է:

Այս ամենից բացի պահպանակի վրա այլ գրով կատարված է ժամանակով ամենաուշ նշումը՝ «Թվ. Հայոց ՋՀԲ (1523) մաշտի Ի (20), կիրակի, գրեցաւ այս» (Էջ Գ):

Երրորդ և չորրորդ միավորները հավանորեն գրվել են Ղրիմում: Հնարավոր է, որ ձեռագիրն այնտեղ է հասել Անիի գաղթականության հետ, որն, ինչպես հայտնի է, տեղի հայության հիմնական մասն էր կազմում:

Թվարկված նյութերից բացի, ժամանակագրության վերջին էջում⁴⁸ պահպանվել է կաթողիկոսների մի փոքր ցանկ, որն անտիպ է: Նախորդ բոլոր գրություններից տարբերվող գրչությամբ, ձախ լուսանցքում, էջի վերնամասից մեկական տողով նշված են Գրիգոր Տղային հաջորդող կաթողիկոսներն ու նրանց աթոռակալության տարիները: Հեղինակը Ներսես Շնորհալուն հաջորդած Գրիգոր Դ-ին շփոթել է վերջինիս հաջորդած Գրիգոր Ե Քարավեժի հետ, որը մեկ տարի է աթոռակալել: Ցանկը հետևյալն է.

«Ի Տէր Ներսէսի փոխման յետոյ Տէր Գրիգորիս Տղայն ամս Ա - Ա,

Տէր Գրիգոր Ապիրատն՝ Է,

Տէր Յոհանէս Մեծաբարոյ ամս ԺԸ

Տէր Կոստանտին՝ ԽԸ,

Տէր Յակոբ ամս ԺԹ

Տէր Կոստանտին Պրունգործին որդին ամս Գ

Տէր Ստեփանոս Հռոմայեցին, որ գերեցաւ ի Կլայեն եւ մեռ(աւ), ամս Գ

Տէր Գրիգոր Թուրքերիցանց, ամս :ԺԴ: Ե:

Կաթողիկոսք ամեն ՀԲ, թվին ԷՃԽԲին» (էջ 70բ):

Ինչպես տեսնում ենք, հեղինակը հասել է մինչև Գրիգոր Է Անավարզեցուն (1293-1307) և ցանկը եզրափակել է «թվին ԷՃԽԲ-ին (1293)» բառերով, սակայն նշվածը գրության թվականը չէ: Քանի որ հիշվում են Անավարզեցու աթոռակալության 14 տարիները, ուստի գրառումն արվել է մինչև հաջորդ Կաթողիկոս Կոստանտին Գ Կեսարացու ընտրությունը՝ 1307 թ.:

Այս փոքրիկ միավորը ճշգրտում է Կաթողիկոս Կոստանտին Կատուկեցու (1286-1289) մականվան հարցը: Նրան տված «Պրունգործ» մականունը բավական մեծ տարածում է գտել⁴⁹: Մ. Օրմանյանը, փորձելով պարզել մականվան ծագումը, ենթադրել է, որ գուցե Կատուկեցու հոր արհեստն էր, կամ հենց ապագա կաթողիկոսի զբաղմունքը՝ վանական միաբանության մեջ, սակայն հստակ փաստ չունենալով, ամփոփել է՝ «Պատմությունը մականունին ծագումը չտար»⁵⁰: Հոռոմոսի ձեռագրում եղած

⁴⁷ Նույն տեղում:

⁴⁸ Այս էջի վերին մասում ավարտվում է Մխիթարի աղյուսակը, իսկ ստորին մասում ձևավոր գրչությամբ, կենդանակերպին վերաբերող ուշ շրջանի տեքստ է:

⁴⁹ Կոստանտինը «Պրունգործ» մականունով է հիշվում մի շարք մանր ժամանակագրություններում: Մանր ժամանակագրություններ, հ. 1, էջ 105, 107, հ. 2, էջ 148, 149, 347:

⁵⁰ «Կոստանտին Կատուկեցի՝ Պրոնագործ (ՄՄԲ. 125) կամ Պրոնգործ (ՄԱՄ. 152) մականունով ալ կը յիշուի, որ կը նշանակէ պրօս կամ այծի բուրդ գործող արհեստաւոր մը, ինչ որ կրնայ՝ կամ Կոստանտինի հօրը արհեստը եղած ըլլալ, կամ թէ նոյնիսկ Կոստանտինի վանական անձնաւորութեան մէջ՝ ձեռագործ

հավելումը Կոստանդին Կատուկեցուն անվանելով «Պրունգործի որդի», միանշանակ պարզում է մականվան ծագումը:

Մեր ձեռագրում հետաքրքիր է նաև Գրիգոր Անավարզեցու մականունը, որը հայտնի է «Տուրքերիցանց» ձևով: Մ. Օրմանյանն այս մականունը ևս անբացատրելի է համարել⁵¹: Հռոմոսի ձեռագրում եղած տարբերությունը՝ «Թուրքերիցանց», հարցը չի պարզում⁵²: Ճիշտը, կարծում ենք, «Տուրքերիցանցն» է: 13-րդ դ. վերջին և 14-րդ դ. սկիզբին Կիլիկիայում աշխատած Ստեփանոս Գոյներերիցանց նշանավոր գրչի անունը մեկնաբանվում է «Գոյներ երեցի որդի»: «Տուրք» անձնանունից առաջացած «Տուրքերիցանց» մականունը նույն իմաստն ունի և Անավարզեցու՝ Տուրք երեցի որդին լինելն է մատնանշում:

Վերջում նշենք Հռոմոսի ձեռագրին առնչվող ևս մի հանգամանք: Մամվել Անեցու Ժամանակագրության՝ Մատենադարանում պահվող ձեռագրերի ուսումնասիրության ընթացքում պարզվեց, որ Հռոմոսի օրինակից է ծագել Մատենադարանի թիվ 3965 ձեռագիրը, որը ընդօրինակել է Ներսես գրիչը Կամենեցում 1624 թ.: Այստեղ տեսնում ենք Մխիթար Անեցու հավելումները վերնագրում՝ «քաղաքաւ անեցիս»⁵³ և Հռոմոսին վերաբերող մասում («հռչակաւոր տունն...»)⁵⁴: Առկա են նաև երկրորդ գրչի կատարած հավելումները, բայց այս վերջինները տարբերվում են հիմնական գրից: Կարելի է ենթադրել, որ գրիչը Հռոմոսի ձեռագիրը որպես նախօրինակ ունենալով, սկզբնապես չի արտագրել երկրորդ գրչի՝ բաց թանաքով գրած հատվածները: Մակայն որոշ ժամանակ անց մեկ ուրիշը, նույն նախօրինակից, արտագրել է նաև հավելումները⁵⁵: Այս հանգամանքը ցույց է տալիս, որ Կամենեցում որպես նախօրինակ օգտագործվել է հենց Հռոմոսի մատյանը (ոչ թե դրանից կատարված ընդօրինակությունը):

Սույն ձեռագիրը թույլ է տալիս հետևելու Մխիթարի մատյանի տեղաշարժին: Եթե 15-րդ դարում ձեռագրում կատարված լրացումների ժամանակ այն գտնվել է Ղրիմում, ապա ավելի ուշ, հավանաբար անեցիների սերունդների հետ, անցել է Լեհաստան և 17-րդ դարի սկզբներին հայտնվել Կամենեցում:

Ամփոփելով կարող ենք ասել, որ Հռոմոսի գրչատանը ստեղծված Մատենադա-

գրադումը ենթադրուիլ՝ Մ. Օրմանյան, Ազգապատում, Բ հատոր, Ս. Էջմիածին, 2001, էջ 1986:

⁵¹ «Ուրիշ տեղ իրեն (Անավարզեցուն, Կ. Մ.) տրուած է Տուրքերիցանց մականունը (ՀԵԹ. 85), որուն ոչ բացատրութիւնը ունինք եւ ոչ մեկնութեամբ կը գտնենք. զի եթէ **երիցու տուրք** կամ քահանայի որդի իմանանք, անմեկնելի կը մնայ **երիցանց** յոգնակի կիրառութիւնը»: Մ. Օրմանյան, Ազգապատում, Բ հատոր, էջ 2033:

⁵² Իր լատինասեր ընթացքի համար, այս կաթողիկոսին մականվանել են նաև «Ջրող» (պատարագի խորհրդական բաժակին ջուր խառնել սկսելու համար), «Հռոմ»։ Հիշենք նաև Անավարզեցու՝ Հռոմին կատարած դավանաբանական զիջումների և Սյունյաց Աթոռից նույնը պահանջող նամակի պատճառով, Ստեփանոս Օրբելյանի՝ կաթողիկոսին ուղղված աննախադեպ խիստ տոնով շարադրված թուղթը։ Չի բացառվում, որ Հռոմոսի ձեռագրում հավելում կատարողը նկատի ունենալով Անավարզեցու գործունեության այս կողմերը, կաթողիկոսի Տուրքերիցանց մականունը ձեռափոխել է Թուրքերիցանցի։

⁵³ Մատենադարան, ձեռ. թիվ 3965, էջ 13ա։

⁵⁴ Նույն տեղում, էջ 62բ։

⁵⁵ Հետաքրքիր է, որ այս գրիչը չի կրկնել միայն այն միջամտությունները (ջնջումները), որ կատարել է երկրորդ գրիչը։

րանի թիվ 3613 ձեռագիրը հայ ձեռագրական մշակույթի եզակի արժեքավոր նմուշներից է: Այն ամփոփում է Սամվել Անեցու Ժամանակագրությունը, որը, մեր համոզմամբ, ընդօրինակել է պատմիչ Մխիթար Անեցին, 1177 թվականին: Մխիթարի ձեռագիրը Սամվել Անեցու Ժամանակագրության առավել հին և անխաթար օրինակներից մեկն է, որը յուրովի մեկտեղում է երկու երախտավոր անեցիների վաստակը՝ մեկինը որպես հեղինակ, մյուսինը՝ գրիչ: